

5.4. Իրավախախտումներ

5.4.1. Հանցագործություններ: Ըստ ՀՀ ներքին գործերի նախարարության ինֆորմացիոն կենտրոնի ներկայացրած տվյալների, հանրապետությունում 2000թ. հունվար-սեպտեմբերին ըստ առանձին հանցատեսակների խմբերի գրանցված հանցագործությունների դեպքերի մասին տվյալները ներկայացված են ստորև աղյուսակներում.

Հանցագործություններ	2000թ. հունվար-սեպտեմբեր, ընդամենը	2000թ. հունվար-սեպտեմբերի աճը կամ նվազումը տոկոսով 1999թ. հունվար-սեպտեմբերի համեմատ (նվազումը «-» նշանով)
Բոլոր ծառայությունների գծով, ընդամենը	9155	22.9
այդ թվում		
քրեական հետախուզության գծով, ընդամենը	5634	11.9
որից՝ ծանր	1089	- 0.09
այդ թվում՝		
դիտավորյալ սպանություն	78	21.9
սպանության փորձ	30	- 44.4
բռնաբարություն և բռնաբարության փորձ	15	- 28.6
մարմնական վնասվածք, ընդամենը	407	10.0
որից՝ ծանր մարմնական վնասվածք	147	14.0
պետական կամ հանրային գույքի հափշտակում, ընդամենը	576	4.5
այդ թվում՝ գողության միջոցով	555	5.5
խարդախության միջոցով	21	10.5
անձնական ունեցվածքի հափշտակում, ընդամենը	3005	30.6
այդ թվում՝		
գողության միջոցով, ընդամենը	2176	27.5
որից՝ բնակարային	617	31.0
կողոպուտի միջոցով	130	26.2
ավազակության միջոցով	66	- 7.0
խարդախության միջոցով	633	50.4
ճանապարհատրանսպորտային պատահար մահացու ելքով	92	- 20.0
տրանսպորտային միջոցների փախցնել	72	2.9
խուլիզանություն	334	- 16.1
ապօրինաբար թմրամիջոցներ պատրաստելը, ձեռք բերելը, պահելը, գործածելը, փոխադրելը, առաքելը կամ իրացնելը	348	- 5.9
ապօրինի կերպով զենք, ռազմամթերք կամ պայթուցիկ նյութեր կրելը, պահելը, պատրաստելը, ձեռք բերելը կամ վաճառելը	193	33.1
այլ հանցագործություններ քրեական հետախուզության գծով	484	- 16.1
տնտեսական հանցագործությունների գծով, ընդամենը	516	18.9
որից՝ ծանր	193	35.9
այդ թվում՝		
յուրացնելու, վատնելու կամ պաշտոնական դիրքի չարաշահման միջոցով՝ պետական գույքի հափշտակում, ընդամենը	181	19.1
որից՝ խոշոր չափերի	77	54.0
կաշառակերություն	32	2.1 անգամ
իշխանությունը կամ պաշտոնական դիրքն ի չարը գործադրելը	41	10.8
կեղծ փող կամ արժեթղթեր պատրաստելը կամ իրացնելը	54	- 8.5
այլ տնտեսական հանցագործություններ	208	21.6
այլ ծառայությունների գծով	3005	51.8
այդ թվում՝ ճանապարհատրանսպորտային պատահար առանց մահի	270	- 23.1

Բոլոր ծառայությունների գծով հանցագործությունների քանակական բաշխվածությունը ըստ մարզերի և տրանսպորտային ՆԳ հանրապետական վարչության

	2000թ. հունվար-սեպտեմբեր, ընդամենը	2000թ. հունվար-սեպտեմբերի աճը կամ նվազումը տոկոսով 1999թ. հունվար-սեպտեմբերի համեմատ (նվազումը «-» նշանով)
Ընդամենը	9155	22.9
Երևան	3773	17.7
Արագածոտն	255	9.0
Արարատ	512	19.3
Արմավիր	733	89.4
Գեղարքունիք	465	20.8
Լոռի	856	23.9
Կոտայք	537	4.5
Շիրակ	981	46.6
Սյունիք	362	3.7
Վայոց Ձոր	155	31.4
Տավուշ	402	22.6
Տրանսպորտային ՆԳ վարչություն	124	- 10.8

Բոլոր ծառայությունների գծով հանցագործությունների քանակական բաշխվածությունը ըստ եռամսյակների

	I	II	III
Ընդամենը	2819	3418	2918
այդ թվում՝ քրեական հետախուզության գծով	1709	2151	1774
տնտեսական հանցագործությունների գծով	162	177	177
այլ ծառայությունների գծով	948	1090	967

5.4.2. Մաքսային իրավախախտումներ: Ըստ ՀՀ պետական եկամուտների նախարարության տրամադրած վիճակագրական ամփոփ տվյալների, 2000թ. հունվար-սեպտեմբերին համակարգում մուտքագրվել է մաքսային օրենսդրության խախտման վերաբերյալ 20 նյութ: Մուտքագրված բոլոր նյութերն ուղարկվել են այլ մարմին նախաքննության: Հետաքննվող գործերով առնչվել են 21 մարդ, նրանցից 14-ը կամ 66.7%-ը մեղադրվել են խոշոր չափերի մաքսանենգության (1999թ. հունվար-սեպտեմբերին՝ 66.7%), 4-ը կամ 19.0%-ը՝ խիստ ներգործող նյութերի, 1-ը կամ 4.8%-ը՝ թմրանյութերի, մնացած 2-ը կամ 9.5%-ը՝ այլ բնույթի մաքսանենգության մեջ (1999թ. հունվար-սեպտեմբերին՝ 33.3%):

Մաքսային իրավախախտումների ցուցանիշները

	2000թ. հունվար-սեպտեմբեր		2000թ. 3-րդ եռամսյակ	
	ընդամենը	%-ով 1999թ. հունվար-սեպտեմբերի համեմատ (նվազումը «-» նշանով)	ընդամենը	%-ով 1999թ. 3-րդ եռամսյակի համեմատ (նվազումը «-» նշանով)
Մուտքագրված նյութերի քանակը	20	42.9	13	6.5 անգամ
Գործերով առնչվող անձանց թվաքանակը	21	40.0	14	7.0 անգամ

Մաքսային իրավախախտումների ցուցանիշներն ըստ եռամսյակների

	I	II	III
Սուտքագրված նյութերի քանակը	2	5	13
Գործերով առնչվող անձանց թվաքանակը	2	5	14

5.4.3. Հարկային իրավախախտումներ: Ըստ ՀՀ պետական եկամուտների նախարարության հետաքննության վարչության կողմից ներկայացված հարկային հանցագործությունների վերաբերյալ վիճակագրական ամփոփ տվյալների, 2000թ. հունվար-սեպտեմբերին համակարգում մուտքագրվել է 114 նյութ՝ կապված հարկային օրենսդրության խախտումների հետ և նախորդ հաշվետու ժամանակահատվածի մնացորդի հետ կազմել է 125 նյութ: Այդ նյութերն ունեցել են հետևյալ շարժը. 114-ը կամ 91.2%-ը ուղարկվել է այլ մարմին նախաքննության (1999թ. հունվար-սեպտեմբերին՝ 88.0%), 3-ի կամ 2.4%-ի վերաբերյալ մերժվել է քրեական գործի հարուցումը, նյութերի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմել է 11 գործ (1999թ. հունվար-սեպտեմբերին՝ 7): Սուտքագրված գործերով առնչվել է 123 մարդ (1999թ. հունվար-սեպտեմբերին՝ 121), հետաքննությունների ընթացքում վերականգնվել է 22.3 մլն դրամ (669.5 մլն. դրամ):

Հարկային իրավախախտման գործերով առնչվող անձանց թվաքանակի բաշխվածությունն ըստ հանցատեսակների, %-ով ընդհանուրից

	2000թ. հունվար-սեպտեմբերին գործերով առնչվող անձանց թվաքանակի բաշխվածությունը տոկոսով	1999թ. հունվար-սեպտեմբերին գործերով առնչվող անձանց թվաքանակի բաշխվածությունը տոկոսով
Ընդամենը	100	100
այդ թվում		
հարկային վճարումների պարտավորությունները կատարելուց հրաժարվելը կամ չարամտորեն խուսափելը	65.0	70.2
հարկային դրոշմանիշներով չդրոշմավորված ապրանքներ իրացնելը	16.3	4.2
ապօրինի ձեռներեցությամբ կամ ապօրինի բանկային գործունեությամբ զբաղվելը	7.3	10.7
հարկային դրոշմանիշներ օտարելը կամ ապօրինի ձեռք բերված հարկային դրոշմանիշներով ապրանքներ դրոշմավորելը	4.1	0.8
հարկային դրոշմանիշներ կեղծելը կամ կեղծված դրոշմանիշներ օգտագործելը կամ իրացնելը	1.6	8.3
հարկային դրոշմանիշներով դրոշմավորման կանոնների խախտելը	-	0.8
հարկային տեսչության կամ կենսաթոշակային և զբաղվածության հիմնադրամի մարմինների պաշտոնատար անձանց ծառայողական գործառնություններին դիմադրելը	0.8	0.8
այլ հանցագործություններ	4.9	4.2

Հարկային իրավախախտումներն ըստ եռամսյակների

	I	II	III
Սուտքագրված նյութերի քանակը	37	50	38
Գործերով առնչվող անձանց թվաքանակը	37	50	36
Հետաքննության ընթացքում վերականգնված գումարը, մլն. դրամ	13.8	2.8	5.7